

ՊԱՏԱՆՈՐԻՍՏՐՈՒԹԻՒՆ

Պուշկարիոյ համար	12 ծր
Տարեկան	6 »
Վեցամսեայ	15 »
Վեցամսեայ	8 »

Ստեղծարարի համար	3 սյր.
Տարեկան	4.50 »

Ծանուցում տղաք սուս լինել երեսին համար 40 ս. լինել վերջին երեսին համար 20 սակերով Կ. Երեւանի անկախ կենտրոն համար 20 0/0 զեղչ կրելու շուրջ

Վստակի համար մ 1/2 10 սակերով

# ՇԱԲԱԹ

ԻՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԻՔՈՎԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐ ՏՄԱՐՈՒՄԻ ԶՈՐԵՔՇԱՐԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

R. P. Kalemcarian, (Austria), Mechitaristengasse W. 4. Vienne

համար 12 ծր 12 ծր  
Վեցամսեայ 6 » համար  
հն

акция на вѣстникъ «Шаржумъ» Варна  
du journal «Journ» Bulgarie

Արսու մեդիսի (20 Պուշկարի համար) (15 ՍԱՆԹԻՄ) (

Գրութիւնք և չն ի սրտիք

«ՇԱԲԱԹ»-Ի ԲԱՏԱՆՈՐԻՍՏՐՈՒՄԻ ԳՐՈՒՎՂԸ ԲԱՏԱՆԻՒՆԸ ՊԵՏԻ Ե ԿՍԵՆԻԿ ՎՃԱՐԵ

## ՕԳՏԱԿԱՐ ՄԻՏՔ ՍԸ

«Կերպու նահապետ, կանչէ ձեզ Հայեր, Հանձարն է մեզ կհանք, զնա վառեցէք»:

Այիշան

«Հանձարն է մեզ կհանք, ըզնա վառեցէք»։ Այիշան հոս բանասեր զմեզ թորչքով մը մեզ կը սորվեցնէ. դարբերու դաս մը՝ Ազգեր, որոնք մնած են հանձարներ, որոնք ցոյց տուած են քաղաքակրթական ընդունակութիւններ, պատմութեան մէջ ունեցած են կեանքի իրաւունք։ Կոր Հոռով մը զինու զբոլթեամբ նուաճեց հին Սուլաստանը, բայց և Յունաստանէն նուաճուեցաւ մտաւորապէս ու բարոյապէս։ Հոռով մայցի լսմէն զօրավար մասնաւոր հպարտութեամբ մը կը խօսէր յունարէնը և իրեն ուսուցիչ կանուանէր Արիստոտէլը, Սոկրատէսը, Ինկա Աթէնքը, բայց հելլէններու քաղաքակրթական ազգեցողութիւնը այնքան մեծ էր, որ անոր աւերակներուն վրայ կանգնեցաւ Բիզանդիոնը։ Այսօր Հայերս մեր գոյութիւնը պահպանելու համար կռուի ենք զուրս եկեր Հոռով մէն աւելի վըտանգաւոր թշնամիներու դէմ... և այս անհաւասար կռուին մէջ մենք յաղթող կը հանդիսանանք եթէ կարենանք եւրոպական նոր քաղաքակրթութեան հետ յառաջ ընթանալ և ետ չԵմնալ։

Իսկ ո՞վ պիտի բերէ մեզ հեռաւոր արեւմուտքէն եւրոպական քաղաքակրթութիւնը, ո՞վ միջնորդ պիտի հանդիսանայ և մեր մէջ տարածէ եւրոպական շուտաւոր և յառաջադէմ միտքեր։ Հարցումին պատասխանը պարզ է։ Այդ միջնորդները պիտի ըլլան եւրոպական համալսարաններու և դպրոցներու մէջ սորվող մեր ուսանողները։—Իրր քանակական տեսակետով նայինք ասոնց վրայ, անոնք պատկառանք կազմեն մեզ։ Անոնց թիւը անհամեմատ աւելի շատ է ուրիշ

փոքր ազգերու ուսանողներու թիւէն, չնայելով որ այդ ազգերը, ինչպէս Յոյները, Ռուսները, Օսերները, Պուլկարները իրենց սեփական սղատ հայրենիք ունին։ Այս պարագան պատուաբեր է հայ ցեղին համար, որովհետեւ հոս պարզ կը տեսնուի հայու քաղաքակրթական ձգտումները և ընդունակութիւնները։ Սակայն այնքան հպարտանալու իրաւունք չունինք երբ մեր ուսանողներուն վրայ նայինք որակի տեսակէտով։

Ազգերու յոյսը իրենց ուսանողութիւնն է, որովհետեւ սա իբրև դաստիարակուած և զրտական ուղիղ ու անդրդուելի սկզբունքներով առաջնորդուող տարր, ուղղութիւն պիտի տայ հասարակական գործերու։ Եւ ուսանողութիւնը իր կոչման բարձրութեան վրայ կանգնած է, երբ նա կը հետաքրքրուի իր պատկանած հասարակութեան հոգեբով ու ցաւերով, կը սիրէ զայն և իր ուժերը կը դնէ անոր տրամադրութեան տակ։ Ի հարկէ մեր խօսքը պղատոնական սիրոյ և հետաքրքրութեան մասին չէ, այլ այն սիրոյ և հետաքրքրութեան մասին, որ մարդս կը մղէ դէպի կենդանի և արդիւնաւոր գործունէութիւն։ Այս տեսակէտով, կը կրկնենք, մենք հպարտանալու իրաւունք չունինք։

Մեր ուսանողներէն շատեր—կարող ենք ըսել մեծագոյն մասը—երթալով Եւրոպա շլացած են այնտեղի վայելքներով, ցոփ ու հանգիստ կեանքով, փոխանակ գիտութիւններով յափշտակուելու, պաշար հաւաքելու և վերագառնալով հայրենիք այդ բոլորը տանջուող Հայութեան օգտին ծառայեցնելու։ Այս տեսակէտով յանդիմանութեան աւելի արժանի են թրքահայ ուսանողները, քան Ռուսահայերը։ Անոնք Բարիչը, ուր կեդրոնացած է տաճկահայ ուսանողութիւնը և կը ներկայացնէ անգոյն ու անկերպարան զանգուած մը, անպետ հոստներու հաւաքածոյ մը, որու

մէջ կը տիրէ մեղկ անտարբերութիւն դէպի ամէն հասարակական գործ, դէպի ամէն գաղափարական ձգտում։ Անգառնալի կերպով անցած են Ռուսիաներու երջանիկ օրերը։

Այսու հանգերձ ուրախ ենք արձանագրելու, որ ունինք ուսանողներու փոքրամասնութիւն մը, որու ցանկութիւնն է օգտակար ըլլալ ու միջնորդ հանգիստանալ եւրոպական քաղաքակրթութիւնը մեր մէջ տարածելու գործին մէջ։ Եւ այս մաքուր տարրը ստեղծած է հոսանք մը, որ երթալով պիտի ընդլայնի ու իր մէջ առնէ մեր ուսանողութեան ստուար մեծամասնութիւն մը։

Սակայն այս պարագային ալ անոնց կը պակսի հայկական հըրպարակին վրայ գործելու համար ամենէն կարեւոր զէնքը—անոնք հիմնովին չեն իւրացուցած կամ ըզրոյզին չեն գիտեր իրենց մայրենի լեզուն, չեն ծանօթ հայկական պրակտիկութեան և պատմութեան հետ։ Այս բացատրելի է, որովհետեւ անոնցմէ շատերը օտար դպրոցներէ կերթան համալսարան։

Ճիշդ այս պակասը լրացնելու համար է, որ Հ. Երեմեան, մեր հրապարակագրութեան մէջ էն հատակ ելի դէմքերէն մին, «Բազմալեզու» մայիս—յունիս թիւին մէջ առաջարկեց կեդրոն տեղեր հաստատել «Ուսանողաց Հայ կարաններ, որոնց մէջ պիտի աւանդուին ազգային հին և նոր պատմութիւն, գրականութիւն և հնախօսութիւն։ Այդ միջոցին ջանքեր եղան ժընէվի ուսանողութեան մէջ ժողով գումարել և խորհիլ իրենց դէպի այլ առաջարկը բռնելիք դիրքին մասին, բայց որովհետեւ ամառային արձակուրդներու առթիւ ուսանողութիւնը ցրուած էր, զլուխ չեկաւ այդ գործը և ճիշդ ստոր համար է, որ մենք ալ հիմա, ուր համալսարանական շրջանները վերսկսած են և ուսանող-

ները համալսարանական քաղաքներու մէջ խմբուած, յարմար դատեցինք արժարձել այս հարցը։

Միտքը օգտակար է, բայց զայն գործնական հողի վրայ դնելու համար անհրաժեշտ են երկու զլխաւոր պայմաններ—պէտք է ունենալ դրամական միջոց և գիտականօրէն պատրաստուած կարող ուսուցիչներ։ Մեր կարծիքով այս պայտօնին ամենայարմար մարդիկը Վէնէտիկի և Վիեննայի մեր հայրերն են, իսկ ըստ Հ. Երեմեանի հարուստներու մէջ կայ նաեւ տրամադրութիւն նպաստել այսպիսի ձեռնարկի մը։ Բերեմն կայ պատրաստ հող, պէտք է միայն այս ուղղութեամբ գործել։

Քայլ մը առաջ երթալու համար մենք կառաջարկենք Եւրոպայի մեր ուսանողութեան կազմել նախաձեռնող մարմին մը, որ ուսումնասիրէ խնդիր իր ամէն կողմերով և զայն ներկայացնէ ուսանողութեան և մամուլի միջոցաւ ընէ պրօպագանդ։ Ե. Հ. Ուս. Միութեան տարեկան համագումարումին մէջ, ուր ներկայացուած է մեր ամբողջ ուսանողութիւնը, կարելի է այս հարցը դնել սեղանի վրայ, սկզբսիլ այս ուղղութեամբ որոշ գործունէութիւն և կազմել մեր առաջարկած նախաձեռնող մարմինը, Երեւի Մենդեան արձակուրդներուն տեղի կուենայ միութեան համագումարումը, որովհետեւ անցեալ Զատիկին հակառակ նախապէս եղած որոշման համագումարը տեղի չունեցաւ։

Թէ ի՞նչ կերպով և ո՞ր տեղ «Հայկարանները պէտք է հաստատել, այդ դարձեալ կորոշուի ուսանողութեան կողմէ։ Հ. Երեմեան կառաջարկէ ժընէվ և Բարիչ։ Մեր կարծիքով Թարիզ անյարմար է, Բարիչի տեղ պէտք է դնել գերմանական քաղաք մը, Պէռլին կամ Լայպցիգիկ։ Այս տեղեր ալ կան բաւական թուով հայ ուսանողներ և ի հարկէ երբ հայկական հաստատուի անոնց թի-

Կրկնապատկուի Գերծր ուսանողներուն է. անոնք պէտք է խորհին միջոցներու մասին և մամուլի միջոցաւ արծարծեն խնդիրը: «Կարծումով էջեր մենք սիրով պիտի նուիրենք այդ միտքով գրուած յօդուածներու և յայտնուած գաղափարներու համար:

Միտքը շատ օգտակար է, պէտք է զայն իրականացնել, բայց ստոր համար հարկաւոր է աշխատանք:

Ուրեմն նուիրուինք անոր մեր բոլոր եռանդով... Մարգարէանի

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ

Պոստիչ, 4 Նոյեմբ. 1903

Աւելորդ, նոյն իսկ ձանձրացուցիչ կըլլար անգամ մըն ալ ներկայացնել տեղւոյս հայ գաղութին անկերպարան և յոռի դրութիւնը: Արդէն քանիցս գրուած է այդ մասին և կարծես լրագրական բոլոր նկատուած թիւներն ու խորհուրդները քատապարտուած են այս գաղութին վերայ չունենալ ունէ բարեբար ազդեցութիւն: Մարմարէ պատի կը պէս խուռ ու անշարժ, անտարբերութեամբ կը լսէ անդուստր գաղութը այդ բոլորը, առանց աշխատելու ամենափոքր չափով իսկ արձագանք տալու այդ բոլորին: Ամէն կողմ վատեցուցիչ ապականութիւն կը տիրէ: Տեղացիները արդէն որոշ աստիճան ինկած են այլասեռման մահացու վիճին մէջ, իսկ նոր հաստատուած գաղթականութիւնն ալ, մեծ մասամբ թէքիրտաղցիներ, հաստատ գրաւական մը չեն ներկայացնել մօտ սպագայի մէջ հինեւուրդ հետեւողները չըլլալու: Ազգային շարժման ոգին գրեթէ բոլորովին բացակայ է, սակայն վտանգաւոր է այն է, որ կամաց կամաց պիտի կորստի մեր ազգային ամենատարական առանձնա-յատկութիւններն ալ այստեղ և փրկութիւնը պիտի ըլլայ անկարելի, կորուստը անդարձ:

ՓՅԵՐ ՈՒ ՎԱՐԴԵՐ

ՆՈՒՆԻՐ Ս. Զ. — ԻՆ

ԳԼՈՒՆ Գ.

Խաղաղ ու լուսնկայ գիշեր էր եւ եղանակին ոչ յարմար մեղմ: Մի. քանիւն կամրջից վար, կուրի եզերքի հետ գրկված բարձր աներից մէկի մէջ բաւական ճաշակաւոր կերպով կահաւորված, միջակ մեծութեամբ սենեակի դէպի կուրը նա. յող պատուհաններից մէկի ապակուն ճակատը դէմ արած կանգնել էր նատէժտա Պետրովեան եւ դիտում էր վարանած խնթի գետի փրփրաղէզ ալիքները, որոնք գրկախառնվում էին կովկասեան, այդ վայկեանին արտակարգօրէն ջինջ ու բարձր երկնքից գետի մէջ միմյոզ շողերի հետ, որ երկնքի լուսատուն նազելիօրէն բաշխում էր երկրին:

Նատէժտա Պետրովեանի գլուխը այրվում էր, որովհետեւ նա դեռ

կարծէ յիշեցնել, որ գոնէ տարրական կրթութիւն մը, ազգային դաստիարակութիւն մը չստանար գէթ ներկայ մասող սերունդը: Տեղացի հայ գաղութը կը բաղկանայ մօտաւորապէս 150 ընտանիքէ, իսկ նորահաստատը, կամ նորերը մօտաւորապէս 50-60 ընտանիք: Զի մոռնում ըսելու, որ այստեղն ալ ինչի և նորի յատկանշական և այնչափ փեսակար պայքարէն գերծ շէ կրցած մնալ: Այդ խնդրի մասին գուցէ ուրիշ անգամ, յարմար առիթին դերենք: Դարով կրթական գործին, որմէ միայն կարելի է սպասել ազգային գանգուածին անդարտ մնալուն ամենաէական զօրավիգը, անկման ամենախտիւն շրջանի մը մէջ կը գտնուի: 200 ընտանիքէ բաղկացած գաղութի մը սեփական վարժարանին մէջ աշակերտներուն թիւը քանի՞ի պէտք է հասնի: Այստեղ, չնայելով որ վարժարանն ու եկեղեցին անխախտ եկամուտներով արդէն ապահովուած են, հայ գաղութը անոր կը մատակարարէ միայն... 54 երկսեռ աշակերտներ (նորոգութիւն, չորսն ալ հրէայ և ուսմանացիներ են): Ասիկա արդէն կը փաստէ, որ զպրոցին, կրթական գործին վախճանն ալ մօտալուտ է: Դպրոցը արդէն ապահով և առատ եկամուտներ ունի, ալ ինչու՞ աշխարհ յարմարութիւններէն օգտուելու շնորհքն ալ չունենանք: Իր շահերը ճանչցող, զիտակից, հեռաան հասարակութիւն մը, վերջապէս ազգային պարտաճանաչութիւն ունեցող գաղութ մը շատ աւելի ծանր պայմաններու մէջ անգամ ջանքեր չէր խնայեր իր վարժարանները կանգուն պահելու: Ըստ համոզումս ըլլալով, որ իր գոյութեան պայմաններուն ամենատարականէն է որ գուրկ կըլլայ:

Այս աչքի գարնոց տխուր իրականութիւնը ամէն գիտակից հայու վրայ պարտք կը դնէ հաւաքական աշխատութիւններով դուրս հանել ազգային վարժարանները այս աննախանձելի դրութիւնէն: Գէթ ինքզինքնին ժողովրդին բարօրութեան նուիրած ու գաղափարական յորջորջող պարոնները յատկապէս նետուէին:

Հակառակ պարագային ինչեւրոն շաւղէն նորերն ալ պիտի երթան դէպի... Գրիգոր

ՆՍԱԿ ԱՍԵՐԻՎՈՅԷՆ

Հ. Յ. Դաշնակցութեան տեղիս կօմիտէն Նոյեմբեր 8ին կիրակի օր պարագադանտի փայլուն հրապարակային ժողով մը ունեցաւ: Սովորականէն շատ աւելի խուռն բազմութիւն մը փութացած էր ներկայ գտնուելու և լսելու օրուան ասենախօսները: Գամառ-Գաթիպայի «Հիմի՞ էլ լուենք» երգով ժողովը բացուեցաւ: Նախագահը Պ. Վարդ քանի մը հակիրճ խօսքերով բացատրեց ժողովին նպատակը: «Այս վասպուրական երգէն յետոյ ասենախօսեց ընկեր Արտաւազդ Ռեստիլեան, որ յուզուած շնչուով մը բացատրեց թիւրք կառավարութեան հայալինջ քաղաքականութեան նպատակը յայտնեց որ այդ շար նպատակը խաչածեւելու համար մեզ ուրիշ բան չէր մնար, եթէ ոչ զիմով յեղափոխութեան:

Հայ ժողովրդի ազատագրութեան պործը կախուած է միայն և միայն իրմէ, եթէ անիկայ իր ձեռքէն եկածը չընէ, թող չսպասէ օտարներու օգնութեանը. երբ անիկա իր կրցածը ընէ, այն աստեղ արդէն օտարները կօզնեն և պիտի օգնեն ալ: Սրինակ բերելով Գուպայի յեղափոխութիւնը ցոյց տուաւ թէ Ամերիկան այն աստեղ միայն օգնութեան գնաց, երբ Գուպայի սպասարեցաւ: Սուսմբը և գեց երգ մը և ըսմ ելաւ երկրորդ ասենախօսը, Ամերիկայի Դաշնակցական գործընկերներ Պ. Արամ Աշոտ: Յարգելի ասենախօսը դեռ նորեկ զէմք մըն էր մեր մէջ, առաջին անգամն էր, որ բեմ կը բարձրանար խօսելու և պատմելու իր հայ եղբայրներուն Հայաստանի տառապանքները: ինքնուրու շատ պարզ ու հակնայի ոճով մը: Ան ըսաւ թէ արտասահմանի մէջ հայրենասիրութիւնը միայն եկեղեցի չիւնելով չի վերջանար, փոխանակ արտասահմանի մէջ եկեղեցի չիւնելու, պէտք է հայ ժողովրդին ձեռքը դնել սալ, որ անիկա կարենայ պաշտպանել Հայաստանի մէջ իր եկեղեցիները:

Պարոնը յետոյ խօսեցաւ յեղ. գործին մէջ պատահած գորադուրիւններու մասին և յուսադրեց ժողովուրդը, որ բնաւ չի վնասի, որովհետեւ մեր ամէն քայլափոխին ար-

դէն պատրաստ է գորադուրիւնը, մենք պէտք է ոյժ տանք յեղափոխութեան, որ միակ փրկութեան ճամբան է, ձամբան, ուրկէ քալած են մարդիկը: Աւետիսեանը, Պետուն և Վազգէնը, Սերովբը ու Սերէմեանը, Յարգելի ասենախօսին այս խօսքերը շատ անուշ սպասուրութիւն ձգեցին հասարակութեան վրայ: Յետոյ ըստ սովորութեան՝ ժամանակ տրուեցաւ ժողովուրդին, որ եթէ հարցումներ ունի ընէ. բայց մէկը հարցում մը չըրաւ, այսինքն ալ գոհ էին:

Ժամանակ տալու սովորութիւնը միայն Դաշնակցականներու մէջ ընդունուած է: Կոտեցէք տղերքներ, գով ժողովը փակուեցաւ և ժողովուրդը մեկնեցաւ խիստ գոհ և ուրախ սպասուրութեան տակ:

Այս օրեր պատահմամբ ձեռքս անցաւ Զօպանեանի «Վայրկեան» խորագրով մի փոքրիկ տետրակը: Մենք կը կարծէինք, որ Զօպանեան այնքան խելք պիտի ունենար և ըմբռնելով «Շարժում» տուած խորհուրդը պիտի զգար իր անկարողութիւնը ու ապկարութիւնը յեղ. ապարեզին մէջ ու վայն ձգելով զբաղը միայն «գրական» գործերով. բայց «Վայրկեան»-ը, այդ ցեղաբանութիւնը, ցոյց կուտայ որ մենք շատ սխալած ենք եղեր Զօպանեանի մօտ այդքան խելք վնասուելով: Իսկ ինչ հոստը հայ Պիգմալոնի մը հովերը կաննէ, բայց որքան ձեռնադրի է հաւը, երբ սիրամարդի փետուրներ հագնի:

Մենք կը կրկնենք. այդ տղէկը յեղ. գործի մարդ չէ և կը թեքողութենք, որ «Հայրենիք» իրեն բայց տուած յեղափոխութեան գպրոցը ցրթայ կարողաւու ու իր ընթացքը լուսնային վերջը՝ ելլէ մեզ ըսելու, թէ: ամենէն գործնական ծրագիրը ո՞վ ունի, Հիմադուրեմ այսպիսի բաներ իր կարողութեանէն վեր են... Երուսեղ Պոյանեան 4 Նոյեմբեր 1903

չէր կարողանում մտանալ Շուտեանի ծաղր եւ արհամարանքը, որին նա արժանացաւ մի երկու ժամ առաջ Պետրոսի տանը: Նա ճակատը պող ապակուն հպելով ուզում էր Գրիգորի մտքը տաքութիւնը մեղմացնել եւ արծաթաղոծ գետը դիտելով իր բարկութիւնը իջեցնել. բայց ի գուր: Վերջապէս էլ չը կարողացաւ այդպէս կանգնել ու ետ քաշվելով պատուհանից՝ օձի պէս ֆլաղով ինքնիրեն շնչեց:

— Այո, այն իստուկը (արմիշկա) ինձ խիտ վրաւորեց. նա ծաղրեց իմ դէպի Արշակը տածած սկրք. ներանք չեն ուզում որ ես, ոտս ազը ջրկա, Արշակին սքրեմ. եւ նա էլ ի՞նչ սքրէ: Բայց արդեօք Արշակը ինձ սիրում է. եթէ սիրելիս լինէր, միթէ Տաճկաստան գնալու վտանգաւոր որոշումը կտար: Թեւեւս նա իմ անվճարական լինելու նկատելով յուսահատվեց եւ այդ ուղումը տուեց: Արդեօք իմ կողմից մեծ սխալ չէր, այդպիսի մի հպարտ երիտասարդի հետ այնչափ երկար խաղաղ եւ միայն

երկդիմի խօսքերով ու խորհրդաւոր ակնարկներով յոյս ներշնչել և բայց դեռ ուշ չէ. նա իմ պէտք է լինի. հետո նախապաշարմունքի արդիւնք ամօթխածութիւն: Ինքն եմ եղել, ի՞նչ փոյթս: Արշակը հայ է եղել, եւ տրամադիր է իր գերի ցեղի դատին ծառայելու, ինձ ի՞նչ, իմ սիրոյ առջեւ ի՞նչ նշանակութիւն ունի դարբնով ստրուկ, փչացած գերի հայ ժողովրդի դատը: Այնուս է որ Արշակի պէս տղան այդ սեսակ մի շնչին ցեղի պայքարին գոհ գնայ: Ոչ ես նրան պէտք է իրեմ իր ցեղից, իր ծնողից, իր գործակից ընկերներից. ես նրան իմ մարմնի, իմ սրտի գերին պէտք է դարձնեմ. այդ ասպետին որ մտածում է իր ցեղը գերութիւնից աղատելու տրամադրութիւն ունեցողներին միանայ: Բայց ունե՞մ ես այդ դերող, սիրապետող ուժը. գեղեցկութիւնը, թովշութիւնը. չէ՞ որ ասում են թէ ես շատ հրապուրելի եմ. էլ ո՞ր օրվան համար են իմ այդ հրապուրանքները:

Այս խօսքերի հետ միասին նատէժտա մօտեցաւ պատին յենված խոշոր հայկուն, քանդեց իր ոսկեթել փարթում մաղերը, քանդեց բաճկոնայի կոճակները, կարծես աւելի ապատ չուրչ առնելու արամադրութեամբ, ու սկսեց ինքզինքը զննել հայելու մէջ:

— Այո, գեղեցիկ եմ. ի՞նչպիսի գեղեցիկ. ի՞նչ հրաշալի մազեր են, ինչ խոր, անդգային աչքեր ունեմ. հասկա վիճա, կարապի վզից էլ ձերմակ ու շնորհալի: Ահա այն ուժերը, որոնցով Արշակին պէտք է տիրանամ. հէնց այսօ... բայց նա չեկաւ: Արդեօք տմտակա չըստացաւ. արդեօք կրկին Շուտեանին հանցիպեց, ու ամէն բան խորտակվեց:

Հազիւ վերջացել էին այդ կցկտոր խօսքերը, երբ սենեակի դուռը բացվեց, մի շարժում արաւ բաճկոնի կոճակները կոճկելու, բայց կրկին թողեց. եւ զողացող ձայնով ասեց. — Ո՞վ է: — Ես եմ, Նատէժտա Պետրովեան:

ՌՈՒԲԷԼԵՆ ԵՆՇԱՄԱՆԵԱՆԻ (ԲԵՌՈՒԻ)

(Շար. Աստուծոյ քիւնի)

Քեռի կը հրամայէ հեռուէն որ անձնատուր ըլլան. զօրքերը իրենց զօրքը հաւարակ աւազակներու հետ կարծելով նախապէս զիմադրել կը փորձեն, բայց երբ հայդուկներու փոխադարձ պատասխանը «չվուչ» մը գետին կը փռէ, սուղթանի հաւատարիմ ծառաները ետ փախչելու իրենց ստիպութեան կը դիմեն, ու հակառակ կողմն ալ ճամբանին փակուած գտնելով անձնատուր կը լինին. Հայդուկապետը կը հրամայէ կեանքեր նստն չլազել, քանի որ անձնատուր եղած էին, ու կը գոհանայ միայն զինքներին ու խմբին հարկաւոր քանի մը գոյքեր անձնել վերջ. Սեպուհի ժողովրդը հեռանալ:

Յաջորդ օրը երզնկայի Դ. քգ զօրաբանակն երկուսի Պէյը յօս 4, 500 զօրքերով կը սանայ Գէմախ հայդուկային խումբը բռնելու կամ զայն կոտորելու: Կը պաշարէ Ս. Մեծ-Լուսա ուրիշ վանքը, ինչ որ կը զօտարացնէ խմբին յարաբերութիւնները վանքին հետ ու պատճառ կը դառնայ երկար օրեր անոր անօրի ու ծարաւ մնալուն: Ստիպուած Գեռին կը հեռանայ իր բռնած ամուր զիբքէն, որուն մօտեցած էր արդէն դաւաճաններու սուսած տեղեկութիւններու շքերհիւ՛ տաճիկ բանակը: Հազու կը մօտենան հայդուկները մերձակայ հեղեղատին ու ջուր խմել կուզեն, ահա զինքերական փողերը կը լսուին հնչել ու հազարաւոր գնդակներ կը թափուին քրեկն զլիս վրայ. Գեռին կը մտնէ իր խմբին զրուծեան բոլոր փափկութիւնը ու կը հրամայէ զիմացի լեռը մագլցել. վերելքը զժուար էր ինքնին քաղցած և ուժաթափ հերոսներուն համար, երբ սուր ճիչ մը անոնց ուշադրութիւնը կը հրաւիրէր ու առելի ծանր պարտականութեան մը առջեւ կը դնէր զանոնք: Վիրաւորուած էր Գեռիի քոյրը, խմբին հերոսներէն ու զեռաստի ժան տ'Արքը ու պրէժ, եղբայր» կը գոչէր. պէտք չէր զայն բարբարոս թշնամիին զազանաբարոյ ախորժակին յանձնել, պէտք էր զայն ազատել: Գեռին ետ կը դառնայ ու յանդուգն

պաղարիւնութեամբ մը իր քոյր կը մօտենայ. կառնէ զայն իր ուսերուն վրայ, կը բարձրանայ զառիվելը՝ իր ականջներուն սակէն սուղ-սուղացող գնդակներու հանած ծուխին ու փոշին մէջէն, և կը պատասխարուի ժայռի մը ետին: Այդ զիջազնական արարքը հրաշքի մը տպաւորութեան սակ կը թողու զօրք ու զօրավար:

—Ահ, եթէ այդքան քաջ զինուոր մը սիրայն ունենայի... կը գոչէ պինպաշին:

—Ահ, եթէ այդքան քաջ պինպաշի մը սիրայն ունենայի... կը գոչեն զինքերները յուսահատ, սրոնք արդէն Մահմէտի ճէննէթը գլորուել սկսած էին՝ բարձրութեանց վրայ ապահով զիբքի հասած հայ հերոսներու անվրիպելի գնդակներէն:

Հայդուկային խումբը իր կոխը հերոսաբար կը շարունակէ, նահանջող սիսակով մը, ու կը զբաղեցնէ մինչև ամսուն 20ը թրքական խուպա զօրքերը: Գեռիի հրահանգներու համաձայն՝ ընկերները խումբ խումբ կը բաժնուին իրարմէ, զիրենք հետապնդող զօրաբանակին ռազմագիտական բոլոր հնարագիտութիւնները պարսպը հանելու նպատակաւ ու զիրար կը գանձն անտառի մը խորը, ուր ժամադիր եղած էին այդ եղերական կառոյն մէջ:

Սուսած էր պակսէին հինգ ընկերներ միայն, սրոնքմէ երեքը ողջ բռնուած էին ու երկուքը՝ Արմենակ Պոյաճեան (\*) ու Սեպուհ Գալեմեան՝ սպաննուած՝ զիջազնական պայքարէ մը յետոյ, իսկ բանակը կը վերադառնայ երզնկա, 15 օր թափառելէ վերջ Սեպուհի ձորերուն մէջ, ունենալով 60 զինուորի կորուստ և 150-ի չափ վիրաւոր:

Երոզակ

(Շարունակելի)

(\*) Արմենակ Պոյաճեան զպրոքը նոր աւարտած 18 տարեկան բարձրահասակ ու բարեկամ էր իր սասարգ մըն էր: Ունէր բնասորութիւն մը յանդուգն ու խելախ, ինչ որ ցոյց տուած էր՝ այն բազմաթիւ կոխներով, զորս մղած էր իր զպրոքական կեանքին մէջ՝ երզնկայի թրքական թաղին լակոտներուն ղէմ, որոնք խմբովին, յաճախ կը յարձակէին հայ զպրոքականներու վրայ, երբ այս վերջին-

ները յանդուգնութիւնը կուենային թրքական փողոցներէն անցնելու:

Արմենակ Պոյաճեանի անունը սարսափեցուցած էր այդ մօնկոլական վոհմակները, որոնքմէ ոմանք ցիրուցան եղած էին շարաշար ձեռներէ ու քթերնին-բերաններն կոտորուած անանկէ վերջ:

Գեմախի հոշակաւոր կոխը այդ ապագայ հերոսի մահուամբ շատ ճնշող տպաւորութիւն գործեց Սրզնկայի յեղափոխական շրջանին մէջ:

Ներքեւ զիբքի մը, որովհետեւ ձեզ սիրում եմ եւ համոզված եմ որ այդ սէրը ինձ միայն եւ միայն անհատական երջանկութիւն եւ հանձնք պէտք է պատճառէ:

Փախուած եմ, որովհետեւ այդ սիրոյ մէջ պէտք է խեղդվեն, անհետատան բոլոր այն զգացմունքները, որ մարդի բարձրացում են իրրեւ ընկերութեան անդամ: Փախուած եմ, որովհետեւ ձեզ սիրելով եւ մահուանդ ձեզնից սիրելով, ես չպէտք է լինեմ այն, ինչ լինելու ձգտուններ ունեմ...

—Թող էլ մի շարունակիր, մրմռեց նատէժտան Արշակի գրուած գրկելով եւ նրա յրթուներն իր կատարի համարյանը գրօղմելով, Ուրեմն դու այդչափ զօրեղ կերպով ես սիրում: Ես էլ քեզ եմ սիրում, իմ կեանք, իմ անգին, Լաւ սիրող լինելուց բարձր էլ ի՞նչ կայ աշխարհի երեսին, բնութեան մէջ: Ի՞նչ ըզգացմունքներ կարող են բնութեան պարգեւած սիրոց բարձր լինել. ի՞նչ է նշանակում ձգտել բարձրանալ

ՆՈՒՍՄԱՅԻ ԾԳԱՆՍԵՂԱՐ:

Ամառս Ծին տեղոյս Գաշնակցական կոմիտէի Օմանդակ մարմնոյն կողմանէ եղած հրուէրին վրայ քաղքիս Ս. Աստուածածին եկեղեցւոյն մէջ ժողովրդեան խուսն բազմութեան մը ներկայութեանը Ռուսահայ քաջարի նահատակներու յիշատակին յարգանս հոգեհանգստեան պաշտօն կատարուեցաւ: Եկեղեցիին աւարտումէն յետոյ Երկսեռ վարժարանաց ուսուցչական մարմնոյ, երգեցիկ ուսանողներու և քահանաներու առաջնորդութեամբ՝ ժողովրդեան ստուար բազմութիւն մը վարդանեսն արական վարժարանը առաջնորդելուց, կատարեց փայլուն սգահանգէս մը: Վարժարանը վարդարուած էր հայ գործիչներու և եկեղեցականներու պատկերներով, սեւ դրօշակներով և որ խոր տըպաւորութիւն կը թողուր հանդիսականներուն վրայ: Արական վարժարանի զլխաւոր դաստառու Պ. Հայկ Փէշտի: Գալեմեան բեմ բարձրանալով հակիրճ, բայց ողբերգիչ առեւտարութեամբ մը ի վեր հանեց մասնաւորաբար օրուսոյ սգահանգէսի հերոսներուն յիշատակը և բացատրեց հայութեան հակակշռող դերը օտար տիրապետողներու վայրագ ու տմարդի վերաբերումներու և

ներքեւ զիբքի մը, որովհետեւ ձեզ սիրում եմ եւ համոզված եմ որ այդ սէրը ինձ միայն եւ միայն անհատական երջանկութիւն եւ հանձնք պէտք է պատճառէ:

Ներքեւ զիբքի մը, որովհետեւ ձեզ սիրում եմ եւ համոզված եմ որ այդ սէրը ինձ միայն եւ միայն անհատական երջանկութիւն եւ հանձնք պէտք է պատճառէ:

Ներքեւ զիբքի մը, որովհետեւ ձեզ սիրում եմ եւ համոզված եմ որ այդ սէրը ինձ միայն եւ միայն անհատական երջանկութիւն եւ հանձնք պէտք է պատճառէ:

ՅԱԿԻՇԱՎԻՍԹԵԱՆԻ ԿԱՆՈՒՅԱՅ:

Արական վարժարանի նախկին աշակերտներէն Պ. Գալեմեան լազարեալուց, յիշելին յաջորդելուց, համակ խանդ ու արիւն, դարձած շեշտեց ու մատնանիշեց հայ ժողովրդեան կատարելիք յեղափոխական պայտականութիւնները: Յետոյ բեմ բարձրացու Պ. Արտաշէս Կարապետեանը և պատմական ամփոփ և համառօտ տեսութիւն մը ընելով բացատրեց Պօլսէնիան իրր կապտիչ ու կաշկանդող ռուսական խոշորութեամբ և հայ հոգեւորականութեան բազմադարեան առանձնաշնորհումներուն ղէմ՝ եղած բռնաբարութիւն մը: Յիշեալ ատենախօսը ցոյց տուաւ նաեւ Պօլսէնիայի հաստատումէն՝ 1836 մարտ 11էն մինչև այսօր հայ կաթողիկոսներու, ռուս արքունեաց հետ ունեցած յարաբերութիւնները և պատմական ցուցմունքներով հաստատեց Ռուսոյ խաբբայ ու յափշտակիչ ցարբրու ու կառավարութեան խոստմնադրուած վարժարանը, նոյն իսկ Պօլսէնիայի տրամագրութեանց ղէմ:

Վերջին ատենախօսը եղաւ Պ. Տաճատ Պէյլերեան, որ բացատրեց հայ ազգի մէջ տիրող սխալ համոզմունքը ու վերաբերումը հանդէպ ռուս ցարբրու, որոնք միշտ խաբբատիր խոստումներով կապտած են հայ ազգը, յափշտակած անոր եկեղեցական իրաւունքներն ու արտօնութիւնները և միշտ արգելք եղած հայ ժողովրդեան քաղաքական անկախութեան ձգտումներուն: Յիշեալ ատենաբանը իր խօսքը մասնաւորաբար վարտասահմանի հատկութեան, զգացուց օգտուելի ներկայ ժամանակի պայմաններէն, չեն լսողութիւնը համար ապագայ ռուսական յափշտակութիւններ:

Մարդկային ընկերութեան մէջ... քըրանք բոլորը դատարկ, մարդու շնչին խելքով ստեղծված բաներ են. նախապաշարուներ են, Գրեհմ դու հայրենասէր ես. բայց ի՞նչ է հայրենիքը. միթէ բնութիւնը մարդ արարածի համար հայրենիք սրտնոց: Մարդու հայրենիքը ամբողջ աշխարհն է, եւ միակ սէրը, ամուսնական սէրը Ոչ մի հայրենիք, լինի նա ազատ թէ գերի լինի զօրեղ ու փառապան, պիտու կամ թոյլ ու զետնաքարչ չէ կարող քեզ տալ այս երջանիկ ժամերը, օրերը եւ տարիները, ինչ որ ես կը տամ...

—Այո, ճիշդ է, ճիշդ է, ոգեւորված բացականչեց Արշակը մեղի արեւելցու ամբողջ կրքովը. իր բազուկներին մէջ առնելով նատէժտային, Դու ինձ համար ամեն ինչ ես. թէ հայրենիք, թէ ազգ, թէ ընկեր, եւ թէ գաղափար, Ամբողջ աշխարհը ամբողջ գաղափարները, բոլոր ընկերային պարտականութիւններս այս բոլորից զոհուած եմ քեզ համար: Կեցցէ բնութիւնը, կեցցէ սէրը... (Շարունակելի)

ներքեւ զիբքի մը, որովհետեւ ձեզ սիրում եմ եւ համոզված եմ որ այդ սէրը ինձ միայն եւ միայն անհատական երջանկութիւն եւ հանձնք պէտք է պատճառէ:

Ներքեւ զիբքի մը, որովհետեւ ձեզ սիրում եմ եւ համոզված եմ որ այդ սէրը ինձ միայն եւ միայն անհատական երջանկութիւն եւ հանձնք պէտք է պատճառէ:

Ներքեւ զիբքի մը, որովհետեւ ձեզ սիրում եմ եւ համոզված եմ որ այդ սէրը ինձ միայն եւ միայն անհատական երջանկութիւն եւ հանձնք պէտք է պատճառէ:

րուն :

Հանգէսը փակուելով ժողովուրդը լիովին գոհ մեկնեցաւ վարժարանէն տխուր՝ բայց ոգեւորիչ ազդեցութեան մը տակ :

Օ. Ա.

Վ Ի Պ Լ Կ

Մեր նախորդ թիւի «Ասկէ Անկէ» յօդուածին մէջ պէտք է կարգաւ օվայ այն սօցիալիզմին, որու առաջնադասը վաղափառ իմաստակներ են, փոխանակ կարգաւ օվաղուսն իմաստակներ են :

ՍԵՐ ՔԻՆԱԳԱՏՆԵՐՈՒՆ

Ոչ ոք կրնայ ուրանալ, թէ արուեստներու բարձրագոյնը և կատարելագործման համար քննադատութիւնը մեծ ազդակ մը եղած է : Էն մեծ արուեստագէտները իրենց յառաջիմութիւնը և յաջողութիւնը կը պարտին քննադատութեան : Քաղաքակիրթ կեդրոններու մէջ քննադատութիւնը կը կազմէ գրականական գատ ճիւղ մը, որովհետեւ առանց քննադատութեան ապահով, որոշ և ակնբերեալ յառաջիմութիւն մը անհնարին է արուեստի ամէն ճիւղի մէջ, բայց մասնաւորապէս բեմական արուեստին մէջ :

Անաշխու ուղղամիտ և մանաւանդ գիտակից քննադատութիւնը գերասանի մը զարգացման, յառաջացման գլխաւոր պայմանն է : Բեմական աշխատանքներու կեանքը ու ապագան անաշխ քննադատութեան հետ կապուած են ուղղակի : այս կենսական կէտը անգիտակցող և արհամարող գերասանը վերջնականապէս յոյսը կորսելու է ինքիւրմէն :

Գործողը ու ցաւալի երեւոյթ մըն է սակայն, որ մեր մէջ, երբեմն մասնաւոր գիտումներով կըլլայ քննադատութիւնը, որ կուզայ իր խոյանքին մէջ կասեցնել հայ բեմի խոնարհ, համեստ, տառապող ու չվարձատրուող աշխատուորը : Քննադատութիւն... մանաւանդ թատերական քննադատութիւն : Որքան զփուրին գործ անոնց համար, որ թատրոնը երազնուն մէջ տեսած են և բեմական արուեստէն անտեղեակ են :

Գոնէ մեր այս քննադատները ունենային ազնուութիւն և չը շփոթէին անձնական հաշիւները գեղարուեստական քննադատութեան հետ : Բարեբաղդաբար ամեն անկիւնէ կըսած այդպիսի անարդար վարմունքի կարեւորութիւն չեն տուած և չպիտի ալ տան հայ բեմին աշխատանքները, որոնք իրենց ընդգրկած դժնդակ ասպարէզին ու արուեստին սիրուն համար արհամարհելով այդ նպատակաւոր խճճանքները՝ իրենց գործը շարունակել պիտի հետամտին : Հարկաւ աշնան սլաքներու այդ տարափին մէջէն ճշմարիտ ու գիտակից քննադատութեան ներդաշնակ ձայնը կուգայ իր կարգին հարկաւոր եռանդը և յոյսը ներշնչել հայ բեմի աշխատուորին :

Գ. Յակոբեան

(\*) Ասով վիճաբանութիւնը փակուած կը համարենք :

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Բացուած են ազգային ժողովի նիստերը, վիճաբանութիւնները կը շարունակուին :

—Անցեալ ուրբաթ՝ կէս գիշերին Սօֆիայի մէջ պատահեցան երկրաշարժի ուժեղ ցնցումներ : Նոյնը զգացուեցան դրեթէ Պուլկարիոյ ամեն կողմերը : Վնասներ չկան :

—Երկու մակեդոնացի յեղափոխականներ իբրեւ ուսուցիչներ ներկայացած են Սթոյլաւիտներու պետ կէշովին, որ միլիոնատէր մըն է և մահուան սպառնալիքով պահանջած է 50,000 ֆրանք : Կէշով տուած է երկու չէք : Ապառնացողներէն մէկը ձերբակալուած է չէքը փոխել տուած միլիոնին, միւսը ազատ է :

—14 մակեդոնացի գաղթականներ ցանկանալով հայրենիք վերադառնալ թիւրք հիւպատոսէն անցապիւր առած ու ճամբայ ելած են : Բայց սահմանէն ներս չեն ընդունուած :

—Պուլկարաց Պոլսոյ գործակատարը Բ. Կուր երթալով բողոքեց Դրան այն յայտարարութեան գէմ, թէ Պուլկարիա անհոգ գտնուած է Մակեդոնիան խաղաղեցնելու համար :

—Պուլկարական թերթերը զբաղեցան վերջերս Վայսման անուն ուսական լրտեսով, որ եկած էր իշխանապետութեան քայլերը լրտեսելու :

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թ Ո Ւ Ր Ք Ի Ա

Սուլթանը իր ներկայութեան ընդունեց Ֆրանսայի դէսպանը և յայտնեց որ նախարարական ժողովին յանձնած է բարենորոգման ծրագրին մասին խորհելու ու բանակցելու գործը :

Երկու պետութեանց դէսպանները ուղեցին սուլթանը տեսնել, բայց սա սուտ հիւանդ ձեւանալով չընդունեց զանոնք : Եպարքոսը տեսակցութեան գնաց Ռուսիոյ և Աւստրիոյ դէսպաններուն և առաջարկեց, որ երկու պետութեանց գործակալները Մակեդոնիոյ մէջ հիւպատոսի դեր խաղան, բայց վէշիւրը ստացաւ մերժում :

Սուլթանը մտադիր է դիմադրել նոյն իսկ երբ Ռուսիա և Աւստրիա բռնի ուժի դիմեն : ան յոյս ունի, որ այս պարագային բոլոր պետութիւնները շին կարող համաձայնելու : Որովհետեւ վէշիւրը և արտաքին գործոց նախարարը ծրագրերը ընդունելու կողմնակից են, ամէն օր կըսպասուին նախարարական փոփոխութիւններ :

—Յունաց թագաւորը Վիէննա եղած միլիոններ թիւրք դեսպանին յայտնեց է, որ Ռուրքիա լաւ կընէ, երբ շուտով ընդունի Մակեդոնիոյ բարենորոգման ծրագրերը : Սուլթանը իմանալով այս, շատ վրդովուած է :

Ա Ի Ս Տ Ր Ի Ա

Աւստրիոյ հիւսիսային կողմերը պատահած են փոթորիկներ : Կայ մեծ դիտար : Վիէննայի մէջ ձիւն ինկած է :

ՖՐԱՆՍԱ

Բացուեցան երեսփոխանական ժողովի նիստերը : Տար վիճաբանութեան առարկայ դարձաւ զինուորական ոյժը պակսեցնելու խնդիրը : Հուպարտին յայտարարութեանը թէ դէտք է խաղաղութիւն, բայց ուժեղ բանակի հովանիին տակ, ժօրէս պատասխանեց խիստ լեզուով : Խօսուեցաւ նորէն կշիռաւ — Լօռէի մասին :

Պալքաններու վրայ խօսելով Տէլքոսէ յայտնեց, որ միւրանսա միշտ ոյժ տուած է երկու պետութեանց՝ բարենորոգման ծրագրերը զլուխ հանելու համար :

Նախարարը պարտեց Դրան վարմունքը և յայտարարեց, որ ինք պիտի ալակցի Ռուսիոյ և Աւստրիոյ նոր ծրագրերը գործադրել տալու համար :

Ժողովին մէջ վիճաբանութեան նիւթ դարձաւ նսեւ արտաքին գործոց նախարարութեան պիւտճէն : Իրստերը կը շարունակուին :

—Ռէնի մօտ հոգեւորական դպրոցի մը դատաւորներու կողմէն գրաւման միլիոններ եղաւ դիմադրութիւն : ուստիկանութիւնը միջամտեց, դպրոցը փակուեցաւ :

—Սէնթիւն մէջ վէճ բացուեցաւ կրթական օրէնքի և միաբանական դպրոցներու վրայ : Բօմպ յայտարարեց, որ կղերական դպրոցները վտանգաւոր են, անոնք ազգը երկուքի կը բաժնեն : Ասկէ վատ երեխաներու դաստիարակութիւնը կարելի չէ վստահել մարդոց, որոնք ընտանեկան պարտականութեանց բոլորովին անձանօթ են : Վալտէկ Ռուսօ հակառակեցաւ, Բլէմանսօ վերջինիս լուսածը ջրեց ու փափաք յայտնեց, որ Վալտէկ Ռուսօ չը կրնայ իր սկսած գործը :

ԱՆԳԼԻԱ

Լօնտօնէն շուր իջեցուցած են 25,000 թօնօնոց նաւ մը : Ասիական աշխարհիս ամենէն մեծ նաւն է :

—Անգլիոյ և Թիպէթի միջեւ

ծագած անհամաձայնութիւնը լուրջ կերպարանք կըստանայ և պատերազմ կըսպառնայ : Անգլիական զօրքը արգէն շարժած է : Հնդկաստանի Փոխարքան ճամբայ ելաւ չորս զրահաւորներով :

ԱՄԵՐԻԿԱ

Երկաթուղիի բանւորները գործը բաժն են Զիքալօի մէջ : Փողոցներու մէջ ծագած են խռովութիւններ : ուստիկանութիւնը կրակը բաժն են բանւորներուն վրայ :

ՓՍՐԹՈՒԿԱ

Լուցիթանիա անուն միծ օդապարիկ մը փոթորիկէն դէպի Ովկիանոս քշուած է անոր մէջ կային երեք հոգի, որոնցմէ դեռ լուր չկայ :

ՉՈՒՆՅԵՐԻԱ

Ժրնէվի մէջ խուզարկուած են անիշխանականներու բնակարանները և արտաքուստ են շատ մը ռուս անիշխանականներ ու ռուս պետական լրտես մը :

Ի Ա Տ Ր Ո Ն

Նատէժաա Հայ դերասանական ռեմբը այս երեկոյ ներկայացուց պիւի տայ Տէրեւ սիկին Յակոբեանի մասնակցութեամբ և Տ. Վ. Պապանի առաջնորդութեամբ :

- Մարտի
1. Անիտիգ Գահանան Խատերախաղ 2 արար
  2. Պար եւ երգ Օր. Օլկա եւ Հ. Յամբր Կօլօլանի կողմէ
  3. Հովիւք եւ հովուհի եռաձայն երգ Տ. Տ. Պապանի, Յակոբեանի և Օր. Վեհանտի կողմէ
  4. Վանեցիին Շօպիկը
  5. Պար և երգ ամբողջ դերասանախմբին կողմէ
  6. Որդեսպանը կատակախառն թատերախաղ 3 արար :

- Կերակի երեկոյ
1. Երեք հրացանակիրք, խիստ ծածաղաչարժ գօմէտի՝ մէկ արար՝ գօմիկ հաճի Յակոբի կողմէ
  2. Պարամիլլուս Պ. հաճի Յակոբի և Գ. Յակոբեանի կողմէ
  3. Երգ և պար օր. Օլկայի և ամբողջ խմբին կողմէ
  4. Վէտուվ լեւան Աւազակապեղ կատակախառն թատերախաղ 4 արար : Մօտ օրէն պիտի ներկայացուի Վիօնի սուրհանգակ՝ անուն թատերախաղ :
- Լաւ տեղի գրաւել ուղղիները թող աճաւարին կանուխէն գնել տոմսակները :
- Գիները չափաւոր :

ՕՏՎՈՐՈՒՆԻԿ

Мурадъ-Ераносянъ

Педагогичка „Взаимность“ Варна